

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի և  
ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի միջև

ք. Երևան

16.04.2013թ.

Կրթական, գիտամանկավարժական և մշակութային հարաբերությունների հաստատման համար «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Շահեն Շահինյանի, և ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Աշոտ Բլեյանի (այսուհետ՝ Կողմեր), ովքեր գործում են իրենց կանոնադրության համաձայն, ստորագրում են սույն համաձայնագիրը:

## Հոդված 1. Կողմերը

Համագործակցությունը տարածվում է Կողմերի ֆակուլտետների, դպրոցների, ամբիոնների, կենտրոնների, գրադարանների վրա: Յուրաքանչյուր հաստատություն իր աշխատակազմից նշանակում է պատասխանատու անձ, որը կկորդինացնի այս համաձայնագրի՝ հետևյալ նպատակներով որոշված գործողությունները.

1. համագործակցություն ուսուցման ոլորտում.
2. սովորելու, ուսուցանելու և մասնագիտական փորձառության՝ Կողմերի ստեղծած հնարավորություններից Կողմերի սովորողների համար օգտվելու պայմանների ստեղծում.
3. ուսումնական նյութերի և հրապարակումների փոխանակում.
4. համերգների համատեղ կազմակերպում.
5. միասնական մասնակցություն միջազգային ծրագրերում:

## Հոդված 2. Հասարակական կապեր

Կողմերը նպաստում են համաձայնագրով նախատեսված համագործակցությանը հաղորդագրություններով, հրապարակումներով, ազգային և միջազգային մամուլ հաղորդագրություններով: Մինչև հրապարակումը կողմերը պարտավորվում են համաձայնեցնել բոլոր քայլերը, որոնք կարող են վիճելի կամ կասկածելի լինել:

### Հոդված 3. Տևողությունը

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և վավեր է 5 տարի ժամկետով: Անհարժեշտության դեպքում այն կարող է հավելվածներ (լրացումներ) ունենալ կամ վերանայվել: Փոփոխություն նախաձեռնող կողմը երեք ամիս առաջ գրավոր տեղեկացնում է մյուս կողմին: Այնուհետ կողմերը կամ վերանայում են պայմանները կամ նոր պայմաններ մշակում:

### Հոդված 4. Ավարտը

Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի դադարեցնելու սույն համաձայնագիրը՝ մեկ ամիս առաջ տալով գրավոր հաղորդում: Նման իրավիճակի դեպքում այս համաձայնագրի կետերը շարունակում են գործել մինչև վերջնական դադարեցումը:

### Հոդված 6. Ընդհանուր


Համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Կողմերին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Երևանի Կոնսերվատի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ

Ռեկտոր՝ Շահեն Շահինյան

[yksc@conservatory.am](mailto:yksc@conservatory.am)

Երևան, Մայրաթ-Նովայի պող. 1ա



Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ

Տնօրեն՝ Աշոտ Բլեյան

[info@mskh.am](mailto:info@mskh.am)

Երևան, Ա. Բաբաջանյան 25